https://doi.org/10.46991/hc.2024.21.1.054

General Vasiliy (Barsegh) Beibutov in the Crimean (Eastern) War

Karine Yeghiazaryan
https://orcid.org/0009-0007-1669-478X
YSU Faculty of History, Associate Professor at the Chair of Armenian History, PhD
k.yeghiazaryan@ysu.am

Keywords: Vasily (Barsegh) Behbutov, Crimean (Eastern) War, Caucasian Front, Abdy-Pasha, Battle of Bayandur, Bash-Kadiklar, Kyuruk-dara

The article is devoted to highlighting the activities of the famous Armenian general Vasiliy Behbutov in the Eastern (Crimean) War, in the battles of Bash-Kadiklar and Kyruk-Dara, which were part of it. The figures of the Armenian people made a worthy contribution to the victories of the Russian army in the 19th and early 20th centuries with their fighting skills and heroic deeds, greatly contributing to the spread of the glory of the Russian armed forces.

Vasili Behbutov has a unique place in the brilliant constellation of Armenian generals serving in the Russian army. Behbutov is the expression of the brave spirit of the Armenian people, the living embodiment of the fighting friendship of the Armenian and Russian peoples. As a skilled and brave military leader, he was very popular both among his contemporaries and later generations.

Գեներալ Վասիլի (Բարսեղ) Բեհբութովը Ղրիմի (Արևելյան) պատերազմում

Կարինե Եղիազարյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Հիմնաբառեր՝ Վասիլի (Բարսեղ) Բեհբութով,Ղրիմի (Արևելյան) պատերազմ, Կովկասյան ճակատ, Աբդի- փաշա, Բայանդուրի ճակատամարտ, Բաշ-Քաղրքլար,Քյուրուկ-դարա:

Հոդվածը նվիրված է նշանավոր հայ զորավար Վասիլի Բեհբութովի գործունեության լուսաբանմանը Արևելյան (Ղրիմի) պատերազմում, դրա մաս կազմող Բաշ-Քաղրքլարի և Քյուրուկ-Դարայի ճակատամարտերում: Հայ ժողովրդի զորձիչներն իրենց մարտական վարպետությամբ ու

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 54-62
Received: 05.06.2024
Revised: 06.07.2024
Accepted: 31.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2024

սխրանքներով արժանի ավանդ են ներդրել 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ռուսական բանակի հաղթանակներում՝ մեծապես նպաստելով ռուսական զինված ուժերի փառքի տարածմանը:

Ռուսական բանակում ծառայող հայ գեներալների փայլուն համաստեղությունում իր ուրույն տեղն ունի Վասիլի Բեհբութովը: Բեհբութովը հայ ժողովրդի քաջարի ոգու արտահայտությունն է, հայ և ռուս ժողովուրդների մարտական բարեկամության կենդանի մարմնացում: Որպես հմուտ ու խիզախ զորավար՝ նա մեծ ժողովրդականություն էր վայելում ինչպես իր ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների շրջանում:

Генерал Василий (Барсег) Бейбутов в Крымской (Восточной) войне

Карине Егиазарян
Исторический факультет ЕГУ, доцент кафедры истории армении, к.и.н.

Ключевые слова: Василий (Барсег) Бейбутов, Крымская (Восточная) война, Кавказский фронт, Абды-паша, Баяндурское сражение, Баш-Кадыклар, Кюрук-дара

Статья посвящена освещению деятельности известного армянского генерала Василия Бейбутова в Восточной (Крымской) войне, в сражениях при Баш-Кадыкларе и Кырук-Даре, входивших в ее состав. Деятели армянского народа своим боевым мастерством и героическими поступками внесли достойный вклад в победы русской армии XIX - начала XX веков, во многом способствуя распространению славы российских вооруженных сил.

Василий Бейбутов занимает уникальное место в блестящем созвездии армянских генералов, служивших в российской армии. Бебутов является выражением храброго духа армянского народа, живым воплощением боевой дружбы армянского и российского народов. Как умелый и храбрый военачальник он пользовался большой популярностью как среди современников, так и среди последующих поколений.

* * *

Ներածություն: Հայ ժողովրդի զավակներն իրենց մարտական հմտությամբ և հերոսական սխրանքներով արժանի ավանդ են ներդրել 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ռուսական բանակի տարած հաղթանակներում՝ մեծապես նպաստելով ռուսական զինուժի փառքի տարածմանը: Ռուսական կայսրության բանակում ծառայում էին հայազգի շատ զավակներ՝ գեներալներ Բարսեղ Բեհբութովը, Միքայել Լոռիս-Մելիքովը,Վալերիան Մադաթովը, Իվան Լազարևը, Արշակ Տեր-Ղուկասովը և ուրիշներ:

Ռուսական բանակում ծառայող հայազգի զորավարների փայլուն համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի Վասիլի Բեհբութովը: Բարսեղ Հովսեփի Բեհբութովը ծնվել է 1791 թվականին , Թիֆլիսում: Նախնական կրթությունը ստացել է Թիֆլիսի ազնվականների դպրոցում՝ Անդրկովկասում ռուսական կառավարության հիմնած առաջին ուսումնական հաստատությունում: Այդ դպրոցում մի քանի տարի սովորելուց հետո նա հոր նախաձեռնությամբ մեկնում է Պետերբուրգ: Սովորել է Պետերբուրգի առաջին կադետական կորպուսում (1807-1809

թթ.)։ Զինվորական ծառայությունը սկսել է 1809 թվականից։ Ստանալով պրապորչիկի զինվորական աստիճան՝ գործուղվեց ծառայելու խերսոնյան գրենադերական գնդում որպես գումարտակի համհարզ, Կովկասում տեղակայված ռուսական զորքերի գլխավոր հրամանատարն էր, հեծելազորի գեներալ։ Ալեքսանդր Տորմասովը (վերջինս ղեկավարում էր 1806-1812 թթ. Ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում գործող զորաբանակը, որի կազմում էր Բ. Բեհբութովը) 1810 թ. նրան վստահվեց իր կենսագրության մեջ առաջին մարտական գործողությունը՝ Ախալցխայի ամրոցի պաշտպանությունը։ Վասիլի Բեհբութովը մասնակցել է 1812 թ. Հայրենական պատերազմին։ 1816 թ. նշանակվել է Կովկասի կառավարչապետ Ա.Պ.Երմոլովի համհարզ։ Գեներալ Երմոլովի հրամանատարությամբ նա Հայաստանով անցել է Թավրիզ ու Թեհրան՝ մասնակցել Կովկասյան մուսուլմանական ցեղերի դեմ մղվող մարտերին։ 1825-1827 թթ. եղել է Իմերեթիայի կառավարիչ։ Քաջաբար մարտնչել է 1828-1829 թթ. Ռուս-թուրքական պատերազմում՝ ռազմավարական մեծ հմտություն դրսևորել Ախալցխայի գրավման ու պաշտպանության ժամանակ՝ պարգևատրվելով աղամանադակուռ ոսկյա թրով և Սուրբ Աննայի 1-ին աստիճանի շքանշանով։ Վ.Բեհբութովը 1830-1838 թթ. եղել է Հայկական մարզի կառավարիչ, 1844 թ. նշանակվել է Հյուսիսային և Լեռնային Դաղստանի զորքերի հրամանատար,կռվել լեռնականների առաջնորդ Շամիլի դեմ։ Այս ժամանակահատվածը նշանավորվում է նրանով, որ Բեհբութովն ստացել է ժամանակի համար բացառիկ՝ Ալեքսանդր Նևսկու (2 անգամ) և Սուրբ Գեորգիի 3-րդ աստիճանի շքանշաններ [Առավել մանրամասն տե՛ս Պարսամյան Վ., Գեներալ Բեհբութով, Երևան,1943, էջ 20-25]։

1850-ական թվականների սկզբին դիվանագիտական սուր առճակատում էր առաջացել եվրոպական հզոր տերությունների միջև։Վերջինիս բուն շարժառիթը Մերձավոր Արևելքում իրենց քաղաքական ազդեցությունը հաստատելու ձգտումն էր, որի գլխավոր խոչընդոտը Օսմանյան կայսրությունն էր։ Անգլիայի և Ֆրանսիայի դրդմամբ կտրուկ սրվել էին Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները։ Թուրքիան մերժեց Ռուսաստանի վերջնագրային պահանջները, որոնք վերաբերում էին Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ուղղափառ ժողովուրդների ծանր կացության բարելավմանը։ Այս ամենը ի վերջո հանգեցրեց Ղրիմի (Արևելյան) պատերազմի սանձազերծմանը։ Կովկասյան ճակատում Թուրքիան կենտրոնացրել էր մոտ 100- հազարանոց բանակ՝ Աբդի փաշայի հրամանատարությամբ, որը ծրագրել էր երեք՝ Ախալցխայի, Ալեքսանդրապոլի և Երևանի ուղղություններով ներխուժել Անդրկովկաս՝ գրավել Թիֆլիսը , ապա զավթել ողջ Կովկասը։ Հյուսիսից նրան պետք է օժանդակեին ապստամբ լեռնականների ջոկատները՝ Շամիլի գլխավորությամբ։ Թուրքական ստվարաթիվ բանակին պետք է դիմակայեր Կովկասյան ճակատում գործող ռուսական կորպուսը։ 1853 թվականի սեպտեմբերի 19-ին վերջինիս և Ալեքսանդրապոլյան ջոկատի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Բարսեղ Բեհբութովը՝ «կովկասյան հին վետերանը, որը քաջարի և եռանդուն գեներալի համարում ուներ» [Տե՛ս Военная энциклопедия. Т. 4. М., 1995, с . 483],- վկայում է այդ պատերազմում նրա զինակիցներից մեկը՝ գեներալ Պ. Ռուդյակովը։ Ականատեսները վկայում են, որ Բեհբութովի թեկնածությունն անձամբ առաջադրել է Նիկոլայ Առաջինը։ Բեհբութովը փոխարինել էր Կովկասյան բանակի գլխավոր համանատար՝ ֆելդմարշալ Վորոնցովին (վերջինս 72 տարեկան էր

և վատառողջ)։ Կովկասյան կորպուսի և նրա հրամանատարի վրա դրված էր չափազանց պատասխանատու խնդիր՝ պետք էր պաշտպանել Անդրկովկասը թշնամու ներխուժումից, հարվածել նրան Ասիական Թուրքիայում և դրանով իսկ ակտիվ օգնություն ցույց տալ Արևմտյան ճակատում՝ Բալկաններով հարձակվող ռուսական զորքերին։ Կովկասյան կորպուսն կովկասյան ճակատում ինքնուրույն ռազմաստրատեգիական միավոր էր։ Հրամանատարն ինքն էր տնօրինում բոլոր օպերացիաները, ընդհանուր կապ հաստատելով Արևմտյան ճակատի հետ։

Ստանձնելով գործող կորպուսի հրամանատարությունը, Բեհբութովն իր տրամադրության տակ եղած փոքրաթիվ ուժերն արագությամբ դասավորում է Ախալքալաքից մինչև Երևան ձգվող թուրքական սահմանագծում, իսկ ինքը գալիս է Ալեքսանդրապոլ, որտեղ սպասվում էին վճռական մարտերը։ Օսմանյան կառավարությունը, որը թվով մի քանի անգամ գերազանցում էր ռուսական զորքին՝ իր գլխավոր ուժերը կենտրոնացրել էր Կարսում՝ Հայաստանի այդ պատվարում [Տե՛ս Հովհաննիսյան Հ. , Գեներալ Վասիլ Բեհբութով, տե՛ս «Բանբեր հայագիտության», 2021, թիվ 2, էջ 95]։ Դրությունը չափազանց լարված էր հատկապես Հայաստանի սահմանամերձ շրջաններում՝ Շիրակի, Սուրմալուի և Էջմիածնի գավառներում։ Օսմանյան զորքերը և քրդական զինված ջոկատները հաճախակի հարվածներ էին տեղում հիշյալ գավառների խաղաղ բնակչության վրա։ Բեհբութովը կազմակերպում է սահմանամերձ շրջանների հայ բնակչության օգնության գործը։ 1853 թվականին Ալեքսանդրապոլից Էջմիածին հղված մի նամակում Բեհբութովը ցավ է հայտնում հայերի կրած տառապանքների մասին. «Ցավալի է ականատես լինել մեր ազգի դառնություններին։ Առավել ևս Շիրակի և Սուրմալուի գավառների մեր խեղճ ազգի դառն վիճակին» [Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ.57, գ.157, թ.132]։ 1853 թ. հոկտեմբերին թուրքական կորպուսի հրամանատար Աբդի փաշան մոտ 40 հազար զինվորներով բռնում է Արփաչայի աջ ափը և տեղավորվում Ալեքսանդրապոլից 15 կիլոմետրի վրա՝ Բաշ-Շորագյալ գյուղում, նպատակ ունենալով հարձակվել Ալեքսանդրապոլ քաղաքի վրա։ Այդ մասին ռուսական բանակի հրամանատարությանը տեղյակ պահեցին Բայազետից ու Կարսից եկած հայ հետախույզները։

Բայանդուրի ճակատամարտը։ Թշնամու զորքերի ու նրա դասավորության մասին տեղեկություն ձեռք բերելու համար գեներալ Բեհբութովը դուրս է բերում մի փոքր զորաբաժին՝ գեներալ-մայոր Օրբելիանիի գլխավորությամբ։ Օրբելյանիի 7000-անոց զորամասը, որի մեջ մտնում էին 800 հայ, շարժվելով Ալեքսանդրապոլից, խնդիր ուներ իջնել Արփաչայով, մի կողմից պաշտպանելու համար սահմանամերձ հայկական գյուղերը, մյուս կողմից՝ ճնշելու թշնամու ուժերի դասավորությունը և գրված դիրքերը։ Բայց, դեռ իր խնդիրը չկատարած, Օրբելիանիի զորաբաժինը Բայանդուր գյուղի մոտ ընկնում է հակառակորդի հրետանու կրակի տակ և մեծ կորուստներ կրում։ Օրբելիանիի զորաբաժինը հերոսաբար կռվում է թշնամու դեմ, մինչև Բեհբութովն օգնության է հասնում և փրկում նրանց ոչնչացումից։ Չնայած ճակատամարտն սկսել էին թուրքերը, ունենալով մոտավորապես 6 անգամ գերազանցող ուժ, բայց և այնպես, նրանք ոչ միայն չկարողացան հաղթանակել, այլև Օրբելյանիի 7000-անոց ջոկատից ստացան այնպիսի հարված, որ 40 հազարանոց բանակը ստիպված եղավ բռնել նահանջի ճանապարհը։ «Այն (Բայանդուրի ճակատամարտը- Ե.Կ.) , - գրում է ռազմական պատմաբան Պոտտոն, - եղել է նախերգանքը երկու նշանավոր ճակատամարտերի՝ Բաշ-Քաղբքլարի և Քյուրուկ-Դարայի, և կարելի է ասել, այդ մաքուր սուվորովյան մարտերը եղել են նրա պարզ հետևանքները և մի տեսակ նրա շարունակությունը» [Տե՛ս «Кавказ», 1897, N 55]։

Այս առաջին հանդիպումից հետո Բեհբութովն իր ձեռքն է վերցնում հարձակման նախաձեռնությունը: Նոյեմբերի 14-ին նրա զորքերն անցնում են Արփաչայը, գրավում Բաշ-Շորագյալը, իսկ նոյեմբերի 14-ի լուսաբացին Բաշ-Քաղրքլար գյուղի մոտ հարձակվում թշնամու գլխավոր ուժերի վրա:

Բաշ-Քաղրքլարի ճակատամարտը: Բեհբութովի տված առաջին նշանավոր մարտը Բաշ-Քաղրքլարում էր: Ահմեդ փաշան շատ վստահ էր իր զորքերի թվական գերակշռության վրա (36.000 զինվոր, 46 հրանոթ) և հույս ուներ, թե Բեհբութովի փոքրաթիվ ուժերը (10.000 զինվոր, 32 հրանոթ) չպետք է կարողանան դիմանալ իր հարվածներին [Տե'ս Тарле Е ., Сочинения в двенадцати томах, том. 8, М., 1959, с. 54] : Սակայն նրա հաշվարկները շուտով ի դերև ելան: Բեհբութովը,որն անձամբ էր մշակել մարտի պլանը, ուժերի մի մասն ուղղում է դեպի Օղուզլիի բարձունքները՝ թուրքերին նահանջի հնարավորությունից զրկելու համար: Ճակատամարտը սկսվում է երկկողմանի կատաղի գրոհներով: Ճակատամարտին մասնակցել է նաև հայերից և կովկասյան այլ ժողովուրդներից կազմված 11 հարյուրյակ [Տե'ս Հովհաննիսյան Հ., Գեներալ Վասիլ Բեհբութով, տե՛ս ՝Բանբեր հայագիտության», 2021, թիվ 2, էջ 95]: Մի պահ ռուսական բանակի դրությունը ծանրանում է, թուրքերն օգտվելով թվական գերակշռությունից, շրջապատման սպառնալիք են ստեղծում ռուսական բանակի համար: Չնայած թուրքական զորքերը խնդիր ունեին նահանջել դեպի Կարս և նրանից 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հաջիվալի գյուղը, սակայն, լուր ստանալով ռուսների հարձակման մասին և վստահ լինելով իրենց գերազանց ուժերի վրա, պատրաստվեցին մարտի,- «Նայեցեք, ինչպիսի հպարտություն, հանդգնություն ունեն, որ գալիս են մեզ վրա: Մենք չենք խփի այդ անհավատներին, այլ կշրջապատենք նրանց, կկապոտենք ձեռքերը և կենդանի կտանենք Կարս» [Տե'ս Պողոսյան Ա.Մ. , Ռուս-հայ բարեկամության պատմությունից, էջ 148] : Ինքնավստահ Ահմեդ փաշան սկզբում իր զորքերը դասավորեց Քաղրքլար գետի ձախ ափին երկու շարքով, յուրաքանչյուր շարքում տեղավորելով վեց գումարտակ, 15 հրանոթ և մեկական գունդ հեծելազոր, պահեստում թողնելով 8 գումարտակ և 8 հրանոթ, գլխավոր ճամբեր Օրթաքիլիսայում 6 գումարտակ, Բաշ-Քաղրքլարում՝ մեկ գումարտակ [Տե'ս Պողոսյան Ա.Մ. , Ռուս-հայ բարեկամության պատմությունից, էջ 148]: Հակառակ Ահմեդ փաշայի գոռոզամտությանը, Բեհբութովը խելացիորեն կազմակերպում է իր զորքերի գրոհը թշնամու դեմ: Նա իր լավագույն զորամասերը գեներալ Բագրատիոն-Մուխրանսկու, Բրիմմերի, Օրբելիանիի ղեկավարությամբ նետում է թշնամու աջ թևի վրա և վճռական հարվածով հետ շպրտում նրան առաջին գծից: Ահմեդ փաշան շտապով մեծ թվով օգնական զորքեր է ուղարկում, որոնց հաջողվում է վերականգնել իրենց նախկին դիրքերը և նեղել հակառակորդին:Այս կռվում մահացու վիրավորվում է գեներալ մայոր Օրբելիանին: Տեսնելով ստեղծված ծանր դրությունը, Բեհբութովն անմիջապես վերցնում է երկու վաշտ երևանցիներից ու երկու թնդանոթ և անձամբ մտնում մարտի դաշտ [Богданович М.И., Восточная война, т. 1,1876, с.252] :

Բեհբութովի երևալը, նրա սրտառուչ խոսքերը և անձնական օրինակը ոգեշնչում են մարտիկներին: Կռվի թեժ պահին Բեհբութովը հրամայում է առաջ շարժել հրետանին: Գեներալ-մայոր Ճավճավաձեի խիզախ հեծյալները հերոսաբար հետ են մղում թվով 8-10 անգամ գերակշռող հակառակորդին: Համառ ու կատաղի մարտերը շարունակվում են մինչև ժամը 3-ը: Թուրքերն

այլևս չկարողանալով դիմանալ ռուսների ճնշմանը, անկանոն կերպով սկսում են փախուստի դիմել՝ կռվի դաշտում թողնելով 6 հազարից ավելի սպանված ու վիրավոր, 24 հրանոթ, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Բեհբութովն այդ ճակատամարտում տալիս է 317 սպանված և 926 վիրավոր [Богданович М.И., Восточная война, т.1, 1876, с. 252] :

Այս ճակատամարտի մասին ուշագրավ հուշեր է պատմում գեներալ-լեյտենենտ Պավել Ռուդակովը.- «Թուրքերը ռազմական զգալի ուժեր կուտակեցին Կարսի ուղղությամբ՝ Ալեքսանդրապոլից 70 վերստ հեռավորության վրա,ավերեցին ու թալանեցին սահմանային մեր մի քանի գյուղեր: Ստանալով այդ մասին տեղեկությունը, իշխան Վորոնցովը շտապ կարգով հրամայեց հավաքել մոտ 14 հազարի հասնող Ալեքսանդրապոլյան ջոկատը՝ գեներալ-լեյտենանտ, Կովկասի ավագ սերնդի վետերան, քաջ ու օրինակելի զորապետի համբավ վայելող իշխան Վ.Բեհբութովի հրամանատարությամբ: Նոյեմբերի 19-ին իշխանը շարժվեց Բաշ-Քադըքլար. . .Հապաղել այլևս չէր կարելի: Իշխանը հրավիրեց ռազմական խորհուրդ և որոշում կայացրեց անմիջապես հարձակման անցնել թուրքերի դեմ՝ չնայած թշնամու թվական ահռելի գերազանցությանը: Այս սարսափելի ճակատամարտը հիրավի կարող է դասվել ռուսական բանակի նշանավոր ու հերոսական ճակատամարտերի թվին, որի հաղթանակի պատիվն առանց բացառության և հավասարապես պատկանում էր կռվի բոլոր մասնակիցներին՝ սկսած հրամանատար Բեհբութովից մինչև վերջին զինվորը»[Տե՛ս Հովհաննիսյան Հ., Գեներալ Վասիլ Բեհբութով, տե՛ս «Բանբեր հայագիտության», 2021, թիվ 2, էջ 96] :

Բաշ-Քադըքլարի հաղթական ճակատամարտից հետո շատերը սպասում էին, որ Բեհբութովը կշարունակի հարձակումը և կպաշարի Կարսը: Սակայն, հակառակ սպասվածին, նա իր զորքերը հետ է քաշում Ալեքսանդրապոլ՝ ձմեռելու համար: Ռազմագետները բարձր են գնահատել գեներալ Բեհբութովի ռազմավարական տաղանդի դրսևորումը Բաշ-Քադըքլարի ճակատամարտում.- «Բաշ-Քադըքլարի ճակատամարտի արդունքները Անդրկովկասյան երկրամասի համար հսկայական էին: Բեհբութովի ջոկատը վերադարձավ Ալեքսանդրապոլ՝ ընդունելությունը հանդիսավոր էր…» [Богданович М.И., Восточная война, т.1 , с.256],- գրում է ռուս ռազմական պատմաբան Մ.Բոգդանովիչը:

Ալեքսանդրապոլի բազմամարդ բնակչությունը և զինվորներն ընդառաջ են գնում Բեհբութովին, երբ նա երևում է իր ձիու վրա, հնչում են ուռաներ և զանգակների կանչեր, բերդից որոտում են հրանոթները: Գեներալ-լեյտենանտ Բոգդանովիչը, որը գրել է Արևելյան պատերազմին վերաբերող չորս հատորանոց պատմությունը, գրում է. «Բաշ-Քադըքլարի հաղթանակը խոշոր նշանակություն ունեցավ ամբողջ Կովկասյան ճակատի համար…Բնականից մեծ ընդունակություններով օժտված Բեհբութովն աչքի ընկավ իր երևելի վճռականությամբ և քաջությամբ» [Տե՛ս Հովհաննիսյան Հ., Գեներալ Վասիլ Բեհբութով, տե՛ս «Բանբեր հայագիտության», 2021, թիվ 2, էջ 97] : Ժամանակակից ստրատեգներից մի քանիսն անհիմն կերպով մեղադրում են Բեհբութովին՝ Բաշ-Քադըքլարի մարտից հետո նահանջող թշնամուն չհետապնդելու համար, գտնելով, որ հետապնդումը կհեշտացներ Կարսի գրավումը: 1854 թվականին Ալեքսանդրապոլից իր եղբորն ուղարկած պատասխան նամակում այդ մասին Բեհբութովը գրել է.-«Ես պետք է վեց զումարտակով գնայի թեկուզ ջախջախված, բայց դեռ եռակի անգամ ուժեղ թշնամու դեմ, նրան ոչնչացնելու, Կարսը վերցնելու և այնտեղ ձմեռելու, այն ժամանակ այդ նույն տակտիկները իրավունք կունենային ինձ խելագար անվանելու: Վեց

գումարտակով 1846 թվականին ես գնացի Շամիլի դեմ և ցիրուցան արի նրան,այժմ դա հին բան է: Ներկա պատերազմում չի կարելի ռիսկի ենթարկվել» [Տե՛ս Հովհաննիսյան Հ., Գեներալ Վասիլ Բեհբութով, տե՛ս «Բանբեր հայագիտության», 2021, թիվ 2, էջ 97]: Ֆելդմարշալի կարծիքը միանգամայն հիմնավոր է, անկարելի էր երեք օրում վերցնել այդ ամրոցը և իմաստ էլ չկար պաշարելու բերդը, երբ ոչ զենք կար, ոչ էլ արկեր : Բեհբութովի տակտիկան այդ հարցում, կարծում ենք ճիշտ էր, որովհետև Բաշ-Քադրքլարից հետո նա չուներ ռազմական անհրաժեշտ այն միջոցները, որոնցով կկարողանար ձմեռնամուտի պայմաններում գրավել ժամանակակից տեխնիկայով, եվրոպացիների օժանդակությամբ և ղեկավարությամբ ամրացված Կարսը: Զենքի ու արկերի պակասի պայմաններում դա կլիներ անմտություն, կթուլացներ զորքի արդյունավետ գործունեությունը՝ թերևս պատճառ դառնալով նրա պարտությանը:

Ալեքսանդրապոլ ձմեռելու եկած զորքերին հայ բնակչությունը դիմավորեց ցնծությամբ: Բոգդանովիչը նկարագրում է, թե ինչպես քաղաքի բոլոր բնակիչները՝ փոքրից մինչև մեծ, խաչերով ու սրբապատկերներով դուրս էին եկել և ծածկել Արփաչայի ափին ընկած բարձունքը: Զորքերի երևալուն պես սկսվեց համաժողովրդական ցնծություն: Հայ կանայք ու աղջիկները հոգատարությամբ շրջապատեցին հաղթանակով վերադարձած մարտիկներին, ինչպես նաև վիրավորներին ու հիվանդներին [Տե՛ս Богданович М.И.,Восточная война, т.1, с.254] :

Կովկասյան ռազմաճակատում 1853 թվականին տեղի ունեցած մարտերից ամենանշանակալիցը Բաշ-Քադրքլարինն էր, որից հետո մինչև 1854 թվականի գարունը տեղի ունեցածները միայն տեղական նշանակություն ունեին: «Բաշ-Քադրքլարի ճակատամարտը,-գրում է գեներալ Ռուդյակովը,-որը մանրամասնորեն նկարագրված է ռազմական զեկուցագրերում, իսկապես կարող է կոչվել ռուսական զորքերի ամենաքաջարի սխրագործություններից մեկը: Նրա պատիվը առանց բացառության հավասար չափով պատկանում է այդ գործի բոլոր մասնակիցներին, սկսած իշխան Բեհբութովից մինչև վերջին զինվորը»[Տե՛ս Русская старина,1883, 528] :

Այդ ճակատամարտում իրենց աչքի ընկնող ծառայությունների համար հայերից շքանշաններով պարգևատրվեցին Ավետովը,Դոլուխանովը, Անտոնովը, Զուրաբ Ավալովը և Դավիդովը:

Բաշ-Քադրքլարի ճակատամարտից հետո, մինչև 1854 թվականի գարունը, թեպետև հիմնական ռազմական գործողությունները դադարել էին, բայց և այնպես թուրքական ավազակային հրոսակախմբերը չէին դադարեցնում իրենց թալանչիական հարձակումները Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ գյուղերի վրա:

Քյուրուկ-դարայի ճակատամարտը: Բաշ-Քադրքլարի ճակատամարտը գեներալ Բեհբութովի վերջին հաղթական ճակատամարտը չէր: Նրան վիճակվեց ևս մի ճակատամարտ տալ, որը նրա նախորդ բոլոր ճակատամարտերից ամենից ավելի ծանրն էր, բայց միաժամանակ ամենից ավելի փառահեղը: Դա Կարսի շրջանի Քյուրուկ-դարա գյուղի մոտ 1854 թ. հուլիսի 24-ին (օգոստոսի 5) տեղի ունեցած ճակատամարտն էր: Հուլիսի 24-ին թուրքական 60 հազարանոց կորպուսը 64 թնդանոթներով, Մուստաֆա Զարիֆ փաշայի հրամանատարությամբ հարձակվում է Բեհբութովի (18 հազար մարդ և 72 թնդանոթ) ջոկատի վրա [Տե՛ս Богданович М.И., Восточная война, т.1, с.256]:

Բեհբութովը մարտն ընդունում է բաց դաշտում: Ճակատամարտն սկսվում է առավոտյան ժամը 5-ին, երկուստեք հրետանային ուժեղ կրակով: Զարիֆ փաշան օգտվելով իր զորքերի թվական գերակշռությունից և նպաստավոր դիրքերից, փորձում է պաշարել Բեհբութովի հեծելազորը: Բեհբութովի խիզախ հեծյալները, հրետանու օգնությամբ, հաջողությամբ հետ են շպրտում հակառակորդի գրոհը, առաջ են շարժվում մոտ երեք կիլոմետր և գրավում 8 հրանոթ: Այս առաջին հաջողությունից ոգեշնչված՝ Բեհբութովը նախաձեռնությունն իր բեռքն է վերցնում և կազմակերպված գրոհում հակառակորդի աջ թևի ու կենտրոնի վրա: Զարիֆ փաշան ցանկանալով ջլատել Բեհբութովի ուժերը, հարձակում է ձեռնարկում նրա ձախ թևի վրա: Բեհբութովը նրանց դեմ է նետում իր պահեստային ուժերը: Մարտադաշտն ընդարձակվում է ավելի քան 5 կիլոմետր: Չնայած տոթին, ջրի պակասին կռիվը շարունակվում էր [Տե՛ս Богданович М.И., Восточная война, т.1, с.256-257]:

Քյուրուկ-դարայի ճակատամարտի ավարտվում է Բեհբութովի կատարյալ հաղթանակով: Թշնամին մարտի դաշտում թողնում է 2232 սպանված, 2018 գերի, 15 հրանոթ, մեծ քանակությամբ զենք, դրոշակներ, ձիեր և փախուստի դիմում դեպի Կարս: Բեհբութովն տալիս է 599 սպանված, 483 վիրավոր , 62 կոնտուժահար [Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 57, գ. 155, թ. 170]: Ճակատամարտից հետո Բեհբութովը շնորհավորում է իր զորքերի հաղթանակը հրետանային 101 զարկով, շնորհավորում մարտում առանձնապես աչքի ընկած հրամանատարներին և զինվորներին և հանգիստ տալիս իր զորքին:

Նիկոլայի 1-ինը ստանալով Քյուրուկ-դարայի ճակատամարտում Բեհբութովի տարած փայլուն հաղթանակի լուրը, ասում է, «Իշխան Բեհբութովն ուզում է ինձ զարմացնել իր հաղթանակներով, ես էլ նրան կզարմացնեմ իմ պարգևներով» [Военная энциклопедия, т.4, с.487]: Քյուրուկ-դարայի հաղթության համար Բեհբութովը ստանում է Սուրբ Անդրեյ Նախավկայի շքանշան, որից Ռուսաստանում մի քանի բարձրաստիճան զինվորականներ են ստացել, իսկ հայ զինվորականների մեջ նա առաջինն է: Ռազմագետների պնդմամբ՝ Քյուրուկ-դարայի հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ ամբողջ կամպանիայի վրա [Военная энциклопедия, т.4, с. 487]:

Բեհբութովի հրամանատարությամբ գործող Կովկասյան կորպուսի փայլուն հաղթանակներն էին, որ խափանեցին օսմանյան բանակի Անդրկովկաս ներխուժելու պլանները և հիմք դրեցին Կովկաս դեսանտ հանելու և Կովկասը Ռուսաստանից կտրելու դաշնակիցների ագրեսիվ պլանի ձախողմանը: Կովկասյան կորպուսի հաղթանակները նկատելի չափով մեղմեցին Ղրիմի (Արևելյան) պատերազմում Ռուսաստանի կրած պարտության ծանր տպավորությունը:

1855 թ. մայիսից գործող կորպուսի հրամանատարությունն ընդունում է Կովկասի փոխարքա գեներալ Ն. Մուրավյովը: Բեհբութովը նշանակվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և գործող կորպուսի մեջ մտնող Կովկասյան առանձին զորամասի հրամանատար [Տե՛ս Հովհաննիսյան Հ., Գեներալ Վասիլ Բեհբութով, տե՛ս «Բանբեր հայագիտության», 2021, թիվ 2, էջ 100] : Վերջինս, 1856-1857 թթ. վարում է Կովկասի Գլխավոր Վարչությանը կից հիմնված Ժամանակավոր Կոմիտեի նախագահի պաշտոնը և մի կարճ ժամանակ փոխարքայի պարտականությունները:

1857 թ. հունվարի 6-ին Բեհբութովը ստացել է հետևազորի գեներալի աստիճան, իսկ 1858 թ. փետրվարի 8-ին նշանակվել պետական խորհրդի անդամ: Նա մահացել է Թիֆլիսում, 1858 թ. մարտի 10-ին՝ ստամոքսի քաղցկեղից:

Բեհբութովը հայ ժողովրդի քաջակորով ոգու արտահայտությունն է, հայ և ռուս ժողովուրդների մարտական բարեկամության կենդանի մարմնացումը: Որպես հմուտ ու քաջ զորավար, նա մեծ ժողովրդականություն է ունեցել ինչպես իր ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների շրջանում:

Գրականության ցանկ

Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ.57, գ. 155, թ. 170, գ.157, թ.132:

Պարսամյան Վ., 1943, Գեներալ Բեհբութով, Երևան:

Պողոսյան Ա., 1974, Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Երևան:

Հովհաննիսյան Հ., 2021, Գեներալ Վասիլ Բեհբութով, տե՛ս «Բանբեր հայագիտության», թիվ 2, էջ 89-106:

Военная энциклопедия. Т. 4, М..

Военная энциклопедия, Том IV, СПб., 1853.

“Кавказ”, 1897, N 55:

Тарле Е., 1959, Сочинения в двенадцати томах, том. 8, Москва.

Русская старина,1883, 528.

Богданович М., 1876, Восточная война, т.1, СПб..